

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ
ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՏՆԱԿՆԵՐԻ
ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանին հատկացված միջոցներով ձեռք բերված 15 տնակներից մեկական տնակ տրամադրել բնակարանի կարիքավոր Վարդենիկ համայնքի բնակիչ Հեղինե Թոռնիկի Ավետիսյանի , Այգուտ համայնքի բնակիչներ Արարատ Խաչատուրի Ջուլիակյանի և Արամայիս Ռուբենի Հովհաննիսյանի, Վահան համայնքի բնակիչներ Ժորա Շամիրի Դալլաքյանի և Էդիկ Սիմոնի Կիրակոսյանի ընտանիքներին՝ ժամանակավոր բնակության համար:

2. Առաջարկել Այգուտ համայնքի ղեկավարին (Հ.Գաբրիելյան)՝ կազմակերպել բնակեցումից ազատ տնակների հանձնումը Հեղինե Ավետիսյանին, Արարատ Ջուլիակյանին, Արամայիս Հովհաննիսյանին, Ժորա Դալլաքյանին և Էդիկ Կիրակոսյանին:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

Ն.ՊՈՂՈՍՅԱՆ